# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՉԻՆՏԵՔՍՏԻԼ ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի<br>տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 15 | Ստորև ներկայացված ապրանքները պատրաստվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 20.12.2018թ. N 1517-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչներին և ձևերին (նկարներին) համապատասխան: Տարազաբաճկոն` ուսադիրներով (Ձև 6): Կարվող ուսադիրներով, որը պատրաստվում է մուգ կապույտ կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ2 խտությամբ), բնական մետաքսե աստառով (8-C5-ВШ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100գ/մ2 խտությամբ), կտորի և աստառի միջև որակյալ ներդիրով (խոլստով), իսկ օձիքը և թևածալքերն ունեն մուգ կարմիր եզրաշերտ` 2,5 մմ լայնությամբ (2581 արտիկուլի մահուդե կտորից): Թևածալքերի վրա առկա են երեք կոճակներ: Ձախ թևքին առկա է թևքանշան (Ձև 20), իսկ աջ թևքին ՀՀ դրոշ` նշված որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան: Արդարադատության լեյտենանտից մինչև կապիտանի կոչում ունեցող դատական կարգադրիչների համար միակոճկուն է` դատական կարգադրիչների ծառայության խորհրդանշանի պատկերով, 4 ոսկեգույն կոճակներով, մարմինը կիսագրկող հարթ մակերեսներով, հետծալված օձիքով և սովորական երկկարանի թևքերով: Տարազաբաճկոնը աջ և ձախ կողմերից ունենում է կափույրով ծածկվող կտրվածքով գրպաններ, իսկ ձախ մասում` կոճկվող ծոցագրպան (Ձև 6): Արդարադատության մայորից մինչև գնդապետի կոչում ունեցող դատական կարգադրիչների համար, որը երկփեղկանի և երեք կոճականի է, թիկնամասի ներքևում առանց կտրվածքի, իսկ օձիքի վրա ամրացվում է դատական կարգադրիչների ծառայության խորհրդանշանը (Ձև 6): Նախքան տարազաբաճկոնների պատրաստումը տարազաբաճկոնների գունային գամման համաձայնեցվում է Գնորդի հետ: Տարազաբաճկոնների ամբողջ քանակը պետք է պատրաստվի միևնույն |

| | |
|---|---|
| | գործվածքից: Ընդ որում, նախապես (մինչև տարազաբաճկոնների կարելը) Վաճառողը Գնորդին է ներկայացնում նշված գործվածքի բաղադրության, կարգի, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Ապրանքների փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, պարկերի վրա պետք է նշված լինեն անվանումները ըստ վերցված անհատական չափսերի, պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինեն ապրանքի անվանումը, քանակը, չափսերը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Текстиль Пип в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 15 | Ниже представленные товары создаются в соответствии с критериями и формами (фотографиями), утвержденными постановлением Правительства Республики Армения N 1517-A от 20.12.2018г. Куртка (костюм) с погонами (Форма 6). Со шьюшимися погонами, изготавливается из темно-синей полушерстяной ткани (шерсть 67%, полиэстер 33%, плотностью 317 г/м2), с натуральной шелковой подкладкой (из артикула 8-С5-ВШ темно-синей ткани плотностью 100г/м2), с качественной прокладкой между тканью и подкладкой (с холостом), а воротник и манжеты имеют темно-красную тесьму шириной 2,5 мм (из суконной ткани 2581 артикула). На манжетах имеются три пуговицы. На левом рукаве есть шеврон (Форма 20), а на правом рукаве флаг РА в соответствии с требованиями, утвержденными указанным постановлением. Для судебных приставов, имеющих звание от лейтенанта до капитана юстиции – застегивается на одну пуговицу с изображением символа службы судебных приставов, с 4 золотистыми пуговицами, полуприлегающими гладкими поверхностями, с назад сложенным воротником и с обыкновенными двухшовными рукавами. Костюм с левой и правой стороны имеет карманы с разрезами, покрывающиеся клапанами, а в левой части застегивающийся внутренний карман (Форма 6). Для судебных приставов, имеющих звание от майора до полковника юстиции - двухслойный и с тремя пуговицами, внизу тыльной части без разреза, а на воротнике креплется символ службы судебных приставов (Форма 6). До изготовления костюмов цветовая гамма костюмов согласуется с Покупателем. Полное количество костюмов должно изготавливаться из одинаковой ткани. При этом, заранее (до шитья костюмов) Продавец |

| | |
|---|---|
| | представляет Покупателю выданное аккредитованной в РА организацией заключение лабораторного исследования о составе, категории, стабильности краски и поверхностной плотности указанной ткани. Упаковка товаров - в полиэтиленовых прозрачных пакетах, на пакетах должны быть отмечены наименования, согласно взятым индивидуальным размерам, маркированы, на марках должны быть отмечены наименование, количество, размеры товара. |